ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 24 հունվարի 2007թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի
2-րդ դատական կազմը
Նախագահությամբ՝ Կ.Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ.Պողոսյանի
Հ.Նազարյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Տարոն Սահակյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղ. Տարոն Սահակյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի եւ 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Տ. Սահակյանը միջնորդել է իրեն ազատել պետտուրքի վճարումից, որը բավարարման ենթակա է, քանի որ քրեական գործով հանդիսանում է տուժող եւ խախտվել են նրա որպես տուժողի իրավունքները:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, Սահմանադրական դատարանի 2-րդ կազմը

ՈՐՈՇԵՑ

Տ. Սահակյանի դիմումը՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի եւ 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային ժողովին:

Տ. Սահակյանին ազատել պետտուրքի վճարումից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ